Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
օգոստոսի 30-ի N 976 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2017 թվականի
հոկտեմբերի 5-ի N 1264-Ն որոշման

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## ________ ԹՎԱԿԱՆԻ_______ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՆՈՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ՝ ԺԱՌԱՆԳՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԺԱՌԱՆԳԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| | |
|---|---|
| Տեղեկատվություն ներկայացնող նոտարի անունը, ազգանունը | |
| ՀՎՀՀ-ն | |

| NN ը/կ | Մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի) | | | | | | Ժառանգի | | | | | | | | | ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելու կամ հրաժարվելու վերաբերյալ | Ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | անձնագրային տվյալները | | | | | | անշարժ գույք (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) | | | | | տրանսպորտային միջոցներ | | | այլ շարժական գույք | ժառանգված գույքում ժառանգի ունեցած ժառանգության բաժնեմասը (տոկոս) |
| | անունը | ազգանունը | հայրանունը | ֆիզիկական անձի վերջին հաշվառման հասցեն (դրա բացակայության դեպքում՝ վերջին բնակության վայրի հասցեն) | անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հաշվառման հասցեն | անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի ՀՎՀՀ-ն | անունը | ազգանունը | հայրանունը | հաշվառման հասցեն (դրա բացակայության դեպքում՝ բնակության վայրի հասցեն) | սերիան, համարը | ում կողմից է տրվել (ծածկագիրը) | տրման ամսաթիվը | հանրային ծառայությունների համարանիշը | հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում, բացակայության վերաբերյալ տրամադրած տեղեկանքի համարը, ում կողմից է տրվել (ծածկագիրը), տրման ամսաթիվը | | գտնվելու վայրը (հասցեն) | տեսակը | նպատակային նշանակությունը | արժեքը | կադաստրային արժեքը | մակնիշը | թողարկման տարեթիվը | համարանիշը | անվանումը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

1. Աղյուսակի տիտղոսային մասում լրացվում է տեղեկատվություն ներկայացնող նոտարի անունը, ազգանունը և ՀՎՀՀ-ն:

2. 1-ին սյունակում լրացվում է հերթական համարը:

3. 2-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի անունը:

4. 3-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի ազգանունը:

5. 4-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի հայրանունը (նշված լինելու դեպքում):

6. 5-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձի վերջին հաշվառման հասցեն (դրա բացակայության դեպքում՝ վերջին բնակության վայրի հասցեն)՝ տեղեկատվության առկայության դեպքում:

7. 6-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի հաշվառման հասցեն (լրացվում է, եթե մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր կամ նոտար)՝ տեղեկատվության առկայության դեպքում:

8. 7-րդ սյունակում լրացվում է մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի ՀՎՀՀ-ն (լրացվում է, եթե մահացած կամ դատարանի վճռով մահացած ճանաչված ֆիզիկական անձ հանդիսացել է անհատ ձեռնարկատեր կամ նոտար):

9. 8-րդ սյունակում լրացվում է ժառանգի անունը:

10. 9-րդ սյունակում լրացվում է ժառանգի ազգանունը:

11. 10-րդ սյունակում լրացվում է ժառանգի  հայրանունը (նշված լինելու դեպքում):

12. 11-րդ սյունակում լրացվում է ժառանգի հաշվառման հասցեն (դրա բացակայության դեպքում՝ բնակության վայրի հասցեն):

13. 12-րդ սյունակում լրացվում է ժառանգի անձնագրի սերիան, համարը:

14. 13-րդ սյունակում լրացվում է ժառանգի անձնագիրն ում կողմից է տրվել (ծածկագիրը):

15. 14-րդ սյունակում լրացվում է ժառանգի անձնագրի տրման ամսաթիվը:

16. 15-րդ սյունակում լրացվում է ժառանգի հանրային ծառայությունների համարանիշը՝ տեղեկատվության առկայության դեպքում:

17. 16-րդ սյունակում լրացվում է ժառանգի հանրային ծառայությունների համարանիշի բացակայության դեպքում, բացակայության վերաբերյալ տրամադրած տեղեկանքի համարը, ում կողմից է տրվել (ծածկագիրը), տրման ամսաթիվը՝ տեղեկատվության առկայության դեպքում:

18. 17-րդ սյունակում կատարվում է նշում ժառանգի կողմից ժառանգությունն ստանձնելու կամ ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելուց հրաժարվելու վերաբերյալ (Ստանձնել է, Հրաժարվել է): Ընդ որում, ժառանգի կողմից ժառանգությունն ընդունելուց հրաժարվելու դեպքում լրացվում են միայն աղյուսակի 2-7-րդ սյունակները:

19. 18-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անշարժ գույքի (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) գտնվելու վայրը (հասցեն):

20. 19-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անշարժ գույքի (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) տեսակը:

21. 20-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անշարժ գույքի (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) նպատակային նշանակությունը:

22. 21-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անշարժ գույքի (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) արժեքը դրամով՝ տեղեկատվության առկայության դեպքում:

23. 22-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող անշարժ գույքի (ըստ սեփականության իրավունքի վկայականի տվյալների) կադաստրային արժեքը դրամով՝ տեղեկատվության առկայության դեպքում:

24. 23-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի մակնիշը:

25. 24-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի թողարկման տարեթիվը:

26. 25-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի համարանիշը:

27. 26-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող այլ շարժական գույքի անվանումը:

28. 27-րդ սյունակում լրացվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի ժառանգված գույքում ժառանգի ունեցած ժառանգության բաժնեմասը տոկոսով:

29. Գույքը մեկից ավելի ժառանգի կողմից ժառանգվելու դեպքում՝ յուրաքանչյուր ժառանգի համար աղյուսակում լրացվում է առանձին տողով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ